«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

10 մարտի, 2026թ. N 3 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Անդամակցության հանձնաժողովի կանոնադրության 7.2 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Անդամակցության հանձնաժողովի 2025 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026թ. մարտի 10-ի N 3 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
Անդամակցության հանձնաժողովի
2025թ. տարեկան գործունեության հաշվետվություն

Հանձնաժողովի ձևավորումը և կազմը

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Անդամակցության հանձնաժողովի (այսուհետ՝ Անդամակցության հանձնաժողով) ներկայիս անհատական կազմը ձևավորվել է 2025թ. հունիսի 13 թիվ 40-Ա որոշմամբ: 2025թ. հունվար-հունիս ամիսներին գործող հանձնաժողովի կազմը հաստատված էր 2021թ. հունիսին՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշումներով հաստատվել են Անդամակցության հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը: Անդամակցության հանձնաժողովի 2025թ. գործունեության տարեկան ծրագիրը հաստատվել է Պալատի խորհրդի 2024թ դեկտեմբերի 16-ի 28-Լ որոշմամբ:

Անդամակցության հանձնաժողովի կազմը ներկայումս հետևյալն է.

	Անուն Ազգանուն	**ՀԳԳՀ**	**Կազմակերպություն**
1	Աշոտ Բարսեղյան	2 20 0096	«Էրեբունի» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ
2	Քրիստինե Հովհաննիսյան	2 20 0097	«Այ-Էֆ-Փի» ՍՊԸ
3	Սերգեյ Յակովլեվ	2 20 0054	«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
4	Հռիփսիմե Վարդանյան	2 23 0775	«Քոդ Սիգնալ» ՍՊԸ
5	Արամ Աբաջյան	3 25 0955	«Էյջ Բի Ըքաունթինգ» ՍՊԸ
6	Գևորգ Անդրիասյան	3 25 0935	"ԱԼՄԱՍՏ" ՍՊԸ
7	Գևորգ Ասլանյան	3 25 0963	"ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳ ՖՈՒԴ" ՍՊԸ
8	Աղավնի Բաբայան	2 20 0044	"ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ
9	Սուրեն Ղայթմազյան	3 24 0924	«Այ-Էֆ-Փի» ՍՊԸ

Հանձնաժողովի գործունեությունը 2025թ

Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպել է հիմնականում իրեն վերապահված երկու հիմնական գործառույթների իրականացման ուղղությամբ՝ Պալատին անդամակցության գործընթացի կազմակերպում և Պալատի անդամների կողմից

շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) պահանջների պահպանման նկատմամբ հսկողության կազմակերպում: Հանձնաժողովի 2025թ. ծրագրով նախատեսված մյուս միջոցառումների անհրաժեշտություն չի ծագել:

2025թ. ընթացքում Հանձնաժողովը գումարել է 26 նիստ՝ ստացված անդամակցության դիմումների նախնական փորձաքննության արդյունքների քննարկման և Պալատի խորհրդին առաջարկությունների ներկայացման, ինչպես նաև 2023-2024թթ ՇՄԶ հայտարարագրերի ուսումնասիրության հետ կապված հարցերի քննարկման օրակարգերով:

Այդ ընթացքում ստացվել և նախնական փորձաքննության են ենթարկվել 75 անդամակցության դիմումներ, այդ թվում՝ 18 աուդիտորի, 54 փորձագետ հաշվապահի և 3 կազմակերպության:

Հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել և հանձնաժողովի նիստերում քննարկվել են Պալատի անդամ անդամներից ստացված 2 դիմում՝ ՇՄԶ պահանջների չկատարման պատճառների վերաբերյալ: Արդյունքում Հանձնաժողովը որոշումներ է կայացրել 1 անդամի կողմից Պալատի ՇՄԶ պահանջների չկատարումը հարգելի համարելու վերաբերյալ և ներկայացրել Պալատի տնօրինությանը:

Հանձնաժողովի անդամներն իրականացրել են Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից Պալատին ներկայացված 2023-2024թթ ՇՄԶ հաշվետվությունների ընտրանքային ուսումնասիրություններ:

Ներկայացված 435 Հայտարարագրերից ուսումնասիրության նպատակով հանձնաժողովի կողմից հաստատված մեթոդաբանությամբ կատարվել է 123 (բոլոր հայտարարագրերի մոտ 28 տոկոսը) հատարարագրերի ընտրություն: Ուսումնասիրության արդյունքներն ամփոփվել են և համապատասխան առաջարկություններով ներկայացվել են Պալատի տնօրինությանը և համապատասխան հանձնաժողովին:

Մյուս նիստերում քննարկվել են կազմակերպչական հարցեր, քննարկվել և Պալատի խորհրդի հաստատմանն են ներկայացվել Հանձնաժողովի 2026թ. գործունեության ծրագիրը:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

հ/հ	**Գործառույթ**	**Միջոցառում**	**Ժամկետ**	**Կատարում**
1	Պալատին անդամակցության գործընթացի կազմակերպում	Պալատին անդամակցության համար դիմած կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ Պալատի Կանոնադրությանը, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի և Անդամակցության կարգի պահանջներինհամապատասխանության ուսումնասիրություն (նախնական փորձաքննություն)	Պարբերաբար՝ դիմումի ստացումից հետո 7 օրյա ժամկետում	Իրականացվել է ստացված 75 անդամակցության դիմումի նախնական փորձաքննություն՝ 18 աուդիտորի, 54 փորձագետ հաշվապահի և 3 կազմակերպության
		Հանձնաժողովի նիստի գումարում՝ կատարված ուսումնասիրության արդյունքների քննարկում և դրանց հիման վրա Պալատի խորհրդին Պալատին անդամակցելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Պարբերաբար՝ դիմումի ստացումից հետո 10 օրյա ժամկետում	Գումարվել է Անդամակցության հանձնաժողովի 26 նիստ՝ նախնական փորձաքննության արդյունքների քննարկման և Պալատի խորհրդին առաջարկությունների ներկայացման օրակարգով

2	Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից ՇՄԶ պահանջների պահպանման նկատմամբ հսկողության կազմակերպում	Պալատի գործադիր մարմնից ստացված նյութերի հիման վրա Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից Պալատին ներկայացված ՇՄԶ հաշվետվությունների առնվազն 25%-ի ընտրանքային ուսումնասիրություններ	Փետրվար-նոյեմբեր	վերանայվել են 123 հայտարարագրեր՝ ներկայացված հայտարարագրերի 28,3%
		Հանձնաժողովի նիստերի գումարում՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքների քննարկում և դրանց ներկայացում Պալատի խորհրդին, համապատասխան հանձնաժողովներին և գործադիր մարմնին:	Փետրվար-նոյեմբեր	Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հանձնաժողովի նիստերում և ամփոփ արդյունքները համապատասխան առաջարկություններով ներկայացվել են Պալատի տնօրինությանը և համապատասխան հանձնաժողովին
3	ՊալատիԽորհրդի հանձնարարականների կատարում	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության	Հունվար-դեկտեմբեր	Հանձնարարականներ չեն եղել
4	Հանձնաժողովի Կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության	Հունվար-դեկտեմբեր	Անհրաժեշտություն չի առաջացել

5	Հաշվետվություններ	Հանձնաժողովի 2025թ. գործունեության մասին հաշվետվության ներկայացում Պալատի խորհրդին	Մինչև 31.03.2026թ.	Ներկայացվել է սահմանված ժամկետում

Պալատի Անդամակցության

հանձնաժողովի նախագահ՝ **Աշոտ Բարսեղյան**